ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ՀՄԱՊՁԲ-18/21
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք. Երևան 12 հոկտեմբեր 2021 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Մուշեղ Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ալիք-Էներգո» ՍՊ ընկերությունը, մյուս կողմից, ի դեմս տնօրեն Հովհաննես Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 (հինգ) օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 (հինգ) օրից ավելի,

2.1.8 Ձնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը: Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2 235 120 (երկու միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար հարյուր քսան) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ՝ 372 520 (երեք հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, և այլ վճարներ:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված.

1, 2 չափաբաժիններով՝ 2 (երկու) տարի:

Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված Ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

4.3 Տեխնիկական բնութագրի պահանջներին Ապրանքի անհամապատասխանության կամ որակի նկատմամբ առարկություն ունենալու դեպքում Գնորդն իրավունք ունի պահանջել, իսկ Վաճառողը պարտավոր է.

ա) իր հաշվին ապահովել Ապրանքի փոխարինումը և փոխադրումը,

բ) փորձաքննության արդյունքում թերությունները բացահայտվելու դեպքում՝ փոխհատուցել փորձաքննության ծախսերը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկվում են նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ/ Կատարողի նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4. Եթե Պատվիրատուն Պայմանագրի 3.3. կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

8.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.7Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Պայմանագիրը կազմված է 10 (տասը) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 19շ.20բն.
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027609970100	Հ/Հ՝ 2052022145601001
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 00809912
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
12 հոկտեմբեր 2021 թ. կնքված
ՀՀՈՑ-ՀՄԱՊՁԲ-18/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									
չափաբաժնի համար	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը, տեխնիկական բնութագիր	չափման միավորը	ընդհանուր քանակը	միավոր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	31682250	Ուժային տրանսֆորմատոր ТМГ-100/6 / Երաշխիքային ժամկետը 720 օր/	հատ	1	1 440 000	1 440 000	ՀՀ, ք. Արվիլան, Արզնու խճ. 2	1	13.10.2021
2	44423680	КСО-366 4Н (բաժանիչ РВЗ-10, 3 հատ ապահովիչ ПКТ, էլ. վահանակ) /Երաշխիքային ժամկետը 365 օր/	հատ	1	540 000	540 000		1	
3	44423680	Ալյումինե դող 4*40	մետր	30	1 800	54 000		30	
4	44423680	Մալուխի պղնձյա ծայրակալ Ф95 մմ	հատ	8	2 640	21 120		8	
5	44423680	Մեկուսիչ ШС-10	հատ	6	6 000	36 000		6	
6	44423680	КСО-ի, տրանսֆորմատորի մետաղական տակդիր	հատ	1	144 000	144 000		1	
	Ընդամենը՝					*2 235 120*			

1. **Ապրանքի հանձնում-ընդունումը իրականացվում է Վաճառողի տարածքում**
2. **1,2 չափաբաժինների Ապրանքի փաստաթղթերի լրակազմը պետք է ներառի.**
   - ✓ Որակի համապատասխանության սերտիֆիկատ
   - ✓ Ապրանքը պետք է լինի չօգտագործված, ունենա տեխնիկական անձնագիր և համապատասխանի անձնագրի տեխնիկական պահանջներին
   - ✓ Երաշխիքային ժամկետ՝ 2 տարի

ԳՆՈՐԴ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 19շ.20բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2052022145601001
ՀՎՀՀ 00809912

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
12 հոկտեմբեր 2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ՀՄԱԱՊՁԲ-18/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
չափաբաժնի համարը	ԳՄԱ (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին` ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31682250	Ուժային տրանսֆորմատոր ТМГ-100/6 / Երաշխիքային ժամկետը 720 օր/	-	-	-	-	-	-	-	-	-	1 440 000	1 440 000	1 440 000	1 440 000
2	44423680	КСО-366 4Н (բաժանիչ РВЗ-10, 3 հատ ապահովիչ ПКТ, էլ. վահանակ) /Երաշխի-քային ժամկետը 365 օր/	-	-	-	-	-	-	-	-	-	540 000	540 000	540 000	540 000
3	44423680	Ալյումինե դող 4*40	-	-	-	-	-	-	-	-	-	54 000	54 000	54 000	54 000
4	44423680	Մալուխի պղնձյա ծայրակալ Ф95 մմ	-	-	-	-	-	-	-	-	-	21 120	21 120	21 120	21 120
5	44423680	Մեկուսիչ ШС-10	-	-	-	-	-	-	-	-	-	36 000	36 000	36 000	36 000
6	44423680	КСО-ի, տրանսֆորմատորի մետաղական տակդիր	-	-	-	-	-	-	-	-	-	144 000	144 000	144 000	144 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 19շ.20բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052022145601001
ՀՎՀՀ 00809912

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
12 հոկտեմբեր 2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ՀՄԱԱՊՁԲ-18/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Ալիք-Էներգո» ՍՊԸ

գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 19շ.20բն
h/h 2052022145601001
հվhh 00809912

Պատվիրատու
«Հայաստանի հեռուստատեսային և
ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
h/h 1570027609970100
հվhh 01501898

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 15» « հոկտեմբեր » 2021 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «12» «հոկտեմբեր» 2021 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀՌՑ-ՀՄԱԱՊՁԲ-18/21

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «12 » «հոկտեմբեր» 2021թ. դուրս գրված N Ա3702702479 հաշիվ Ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ Ապրանքները՝

N	Մատակարարված Ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
	Ուժային տրանսֆորմատոր ՏՄԳ-100/6	ՏՄԳ-100/6 /Երաշխիքային ժամկետը 720 օր/	1	1	12.10.2021	12.10.2021	1440	
	ԿՀՕ-366 4Հ (բաժանիչ ՐԲՅ-10, 3 հատ ապահովիչ ՊԿՏ, էլ. վահանակ)	ՐԲՅ-10, ՊԿՏ /Երաշխիքային ժամկետը 365 օր/	1	1	12.10.2021	12.10.2021	540	
	Ալյումինե դող 4*40	4*40	30	30	12.10.2021	12.10.2021	54	
	Մալուխի պղնձյա ծայրակալ Φ95 մմ	Φ95 մմ	8	8	12.10.2021	12.10.2021	21.12	
	Մեկուսիչ ՇՀՀ-10	ՇՀՀ-10	6	6	12.10.2021	12.10.2021	36	
	ԿՀՕ-ի, տրանսֆորմատորի մետաղական տակդիր		1	1	12.10.2021	12.10.2021	144	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ Ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
Ալիք-Էներգո ՍՊԸ

ստորագրություն
Հ. Գրիգորյան
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
ՀՀՌՑ ՓԲԸ

ստորագրություն
Ա. Գևորգյան
Կ.Տ.

Հավելված N 3.1
12 հոկտեմբեր 2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ՀՄԱՊՁԲ-18/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N 1

Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ալիք-Էներգո» ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021 թ. հոկտեմբերի 12 -ին կնքված N ՀՀՌՑ-ՀՄԱՊՁԲ-18/21 ապրանքների մատակարարման գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2021 թ. հոկտեմբերի 15-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված Ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Ուժային տրանսֆորմատոր ТМГ-100/6 / Երաշխիքային ժամկետը 720 օր/	հատ	1
КСО-366 4Н (բաժանիչ РВЗ-10, 3 հատ ապահովիչ ПКТ, էլ. վահանակ) /Երաշխի-քային ժամկետը 365 օր/	հատ	1
Ալյումինե դող 4*40	մետր	30
Մալուխի պղնձյա ծայրակալ Ф95 մմ	հատ	8
Մեկուսիչ ШС-10	հատ	6
КСО-ի, տրանսֆորմատորի մետաղական տակդիր	հատ	1

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ալիք-Էներգո ՍՊԸ

Հ. Գրիգորյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ՀՀՌՑ ՓԲԸ

Ա. Գնորգյան
ազգանուն, անուն

ստորագրություն

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ապրանքների մատակարարման)	[2] Սերիա	[3] Համար
12	Հոկտեմբեր	2021 թ.		Ա	3702702479
[4] Մատակարարման ամսաթիվ					
12	Հոկտեմբեր	2021 թ.		Ճշգրտվող հաշվի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Սույն հաշվով նախատեսված ապրանքները ի պահ են տրվում «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ին Հանձնման-Ընդունման Ակտի համաձայն

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի											
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	8	0	9	9	1	2			
[9] Անվանումը	«ԱԼԻՔ-ԷՆԵՐԳՈ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)										
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	0	8	0	9	9	1	2	/	1	
[11] Բանկային տվյալները	Ինեկոբանկ ՓԲԸ	N 2052022145601001									
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Ռուբինյանց 19 20 ԲՆ.										
[13] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են	ք. Աբովյան, Արզնու խճ.2										
[14] Լրացուցիչ տվյալներ											

Ապրանքներ ձեռք բերող անձի											
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	1	5	0	1	8	9	8			
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	1	8	9	8	/	1	
[17] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)										
[18] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ	N 1570027609970100									
[19] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 95										
[20] Լրացուցիչ տվյալներ											
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն										
	Լիազորագիր	Համար									
		Ամսաթիվ									
[22] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը											
[23] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ք. Աբովյան, Արզնու խճ.2										

[24] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Տարա	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Հարկանենք	Այդ թվում՝ բնապ. հարկ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Ուժային տրանսֆորմատոր ТМГ-100/6	հատ	1	1200000		1200000		20	240000	1440000	
2	КСО-366 4Н (բաժանիչ РВЗ-10, 3հատ ապահովիչ ПКТ, էլ. վահանակ)	հատ	1	450000		450000		20	90000	540000	
3	Ալյումինե դող 4*40	մետր	30	1500		45000		20	9000	54000	
4	Մալուխի պղնձյա ծայրակալ Ф95մմ	հատ	8	2200		17600		20	3520	21120	
5	Մեկուսիչ ШС-10	հատ	6	5000		30000		20	6000	36000	

6	ԿՇՕ-ի և տրանսֆորմատորի մետաղական տակդիր	հատ	1	120000		120000		20	24000	144000	
Ընդամենը						1862600	X	X	372520	2235120	

Դուրս գրող՝ GRIGORYAN HOVHANNES 3211680306

անուն, ազգանուն

12/10/2021 17:19:01

***Ստացող՝** PETROSYAN BELA 6405650081

անուն, ազգանուն

19/10/2021 16:16:12